



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 հունվարի, 2020 թվականի № 3-Լ

«ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ» ՊԵՏԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ ՄԱՍՆԱԿԻ ՉԿԱՅԱՑԱԾ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 31-րդ հոդվածի, «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնման գործընթացի կազմակերպման» կարգի 58-րդ կետի պահանջները և հաշվի առնելով այն հանգամանքը, որ դադարել է գոյություն ունենալ համապատասխան գնման առարկայի գնման պահանջը՝ Հանրային հեռուստառադիոընկերության խորհուրդը որոշում է.

1. «Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի աշխատակազմ» պետական հիմնարկի կարիքների համար համակարգչային տեխնիկայի ձեռքբերման նպատակով «ՀՀՀՌ-ԳՀԱՊՁԲ-01/20» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով նախատեսված 9-րդ չափաբաժնի մասով նշված ընթացակարգը հայտարարել չկայացած:

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

Ա. ՇԻՐԻՆՅԱՆ

20 հունվարի, 2020 թվականի

ք. Երևան